5· ՄԷԱՄԸՏԱՆ։

Թ· Գալէի և Բլուրի մէջ տեղն է Մամբտան, Թ· Գալէից ուղղակի 3 ժամ արևելեան հարաւային ուղղութեան վերայ, իսկ Բլուրից 1 ժամ արևմտեան հիւսիս 30 տնուոր Մէամբտանցի քուրդ են և կան 3—4 տուն գաղթական Թուրքեր։ Խաչլուայ հարաւն է և որոյ քաւշանին խառնուած։

Այս գիւղի արտերն մեծաւ մասամբ անջրդի են։

Միւտիւր մի (գիւղախմբապետ) կը նստի այս գիւղն։

6· ԵԽՆԻԹԱՓԷ (Բլուր)։

Գիւղս դաշտիս կեդրոնէն սակաւ ինչ հարաւ կընկնի $^3/_4$ ժամ Խճուղիէն հիւսիս 7—8 գիւղերու կեդրոնը 76 տուն հայ բնակիչներ ունի, որք մեծաւ մասամբ ընդարձակ վարելահողեր ունին։

Թ· Գալէէ ի Դարա-Քիլիսէ գնալիք երկու ճանապարհին մին այս գիւղէն կանցնի, գրեթէ երկուքին ևս միջավայրն է։

Գիւղիս շրջականերու ջրոց առատ բղխմունքը առիթ տուած են գիւղացւոց ուռի ծառներ տնկել և գոմշեղէն սնուցանել։ Ցեղս քար չը լինելուն՝ գիւղացիք ճահճային վայրերու երեսից կոշտ կը հանեն, կը չորացնեն իբրև քար կը գործածեն տանց շինութեան համար։

Գիւղիս բնակիչք մտաւորապէս տգէտ և նախապաշարեալ վիճակ մը ունին՝ ընտանեկան կեանքն դըժընդակ է, նաև այս ջրի առատ վայրը խիստ անմաքուր կեանք կը վարեն· ուսումնարան չունին, մարագի նման եկեղեցի մի ունէին, քանդեցին, որ շինեն, այս վեց տարի կայ, երեսի վերայ մնացած է։